Արձանագրություն N 2

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով էլեկտրոնային աճուրդով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար նույնականացման քարտեր կարդացող (ID Card reader) սարքերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

25 մարտի 2022 թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մուշեղ Մանուկյանը, անդամներ՝ Հուսիկ Մարտիրոսյանը, Հակոբ Գալստյանը, և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

Օրակարգ
ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/2 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և ամփոփման մասին

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Մուշեղ Մանուկյանը նիստը հայտարարեց բացված: Հայտերի վերջնաժամկետին հայտ են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները

Հ/Հ	Մասնակցի անվանումը, հասցեն	(ԱԱՀ վճարող) կամ (ԱԱՀ չվճարող)	Գնային առաջարկ /ՀՀ դրամ առանց ԱԱՀ	Պլանավորված գին /ՀՀ դրամ /
1	**«ԷԿԵՆԳ» ՓԲԸ**	(ԱԱՀ վճարող)	1250000	1500000

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի հայտի ուսումնասիրությամբ հանձնաժողովը պարզեց, որ կցված ֆայլերը չեն համապատասխանում հայտարարված ընթացակարգին՝ հայտին կցված են ԷԿԵՆԳ-ԷԱՃԱՊՁԲ-22/1 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ այլ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթեր (դիմում-հայտարարություն, իրական շահառուների տվյալների մասին հայտարարություն, լիազորագիր):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց

- ընթացակարգը կասեցնել մեկ աշխատանքային օրով և «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին առաջարկել սահմանված կարգով և ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:
- հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 29.03.2022թ. ժամը 10:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Մուշեղ Մանուկյան

անդամներ _____ Հուսիկ Մարտիրոսյան

_____ Հակոբ Գալստյան

քարտուղար _____ Սպարտակ Հարությունյան